ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Գյումրին արհեստների և արվեստների բնօրրան է, իրական տաղանդների դարբնոց, որը մշտապես փայլել է մշակույթի, սպորտի և գիտության ոլորտներում: Մեր քաղաքը զարգացման և առաջընթացի բոլոր նախադրյալներն ունի: Ընդամենն անհրաժեշտ է քաղաքական կամք:

«Քաղաքացիական պայմանագիրը» պատրաստ է ստանձնել քաղաքի վերափոխման հանձնառությունը, որպեսզի Գյումրին դառնա առավել բարեկեցիկ, տեխնոլոգիապես զարգացած, տնտեսապես ամուր և սոցիալապես պաշտպանված:

Նախընտրական ծրագրով ներկայացնում ենք քաղաքի զարգացման մեր տեսլականը:

1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1.1. Վերանայելու ենք քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ուշադրություն դարձնելով օտարման ոչ ենթակա տարածքներում իրականացված կառուցապատումներին:
1.2. Հետևողական ենք լինելու ապօրինի օտարված համայնքային գույքի վերադարձի խնդիրներին:
1.3. Վերացնելու ենք երկրաշարժից հետո տեղադրված ոչ հիմնական շինությունները, լուծելու ենք այդ տարածքներում բնակվող ընտանիքների բնակարանային հարցը, մասնավորապես՝ «Ավտոկայան» և «Ֆանտաններ» թաղերում:
1.4. Կառավարության աջակցությամբ ավարտին ենք հասցնելու փողոցների լայնածավալ հիմնանորոգումը, միաժամանակ բարեկարգելու ենք մայթերն ու մայթեզրերը:
1.5. Կառուցելու և հիմնանորոգելու ենք ծայրամասային՝ «Մսի կոմբինատ», «Բուլվարային», «Օդանավակայան» թաղամասերի բակերն իրենց ենթակառուցվածքներով՝ դրանք դարձնելով ավելի բարեկարգ և հարմարավետ:

1.6. Պետական և հասարակական նշանակության կառույցներում կառուցելու ենք թեքահարթակներ, որպեսզի մեր քաղաքն ավելի ներառական լինի բոլորի համար։
1.7. Հատկացնելու ենք տարածք նոր գերեզմանոցի համար և կառուցելու ենք գերեզմանատուն՝ լուծելով քաղաքային գերեզմանատների գերծանրաբեռնվածության խնդիրը։
1.8. Լուծում ենք տալու քաղաքաշինության ոլորտին առնչվող կուտակված բոլոր դիմումներին՝ ապահովելով արդարության և թափանցիկության սկզբունքը։
1.9. Խելացի քաղաք («Smart City») համակարգի նախագծում և ներդրում։
1.10. Ցուցակագրելու և հանրայնացնելու ենք համայնքապատկան գույքը՝ թափանցիկ և հրապարակային կառավարման համար, համայնքապատկան հողերի թվային հաշվառում և հանրայնացում ենք իրականացնելու, մասնավորապես՝ աճուրդներին ներկայացվող հողերը։
1.11. Կառավարության աջակցությամբ իրագործելու ենք «Ալեք Մանուկյան» կամրջի վերանորոգման ծրագիրը։
1.12. Սահմանելու ենք հստակ կանոնակարգեր՝ Կումայրի պատմամշակութային տարածքների պահպանման և վերականգնման համար։

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

2.1. Ներդնելու ենք էկոլոգիապես մաքուր ավտոբուսներ՝ ապահովելով խնայող, հարմարավետ և շրջակա միջավայրի համար անվտանգ փոխադրամիջոցներ։
2.2. Վերանայելու և բարելավելու ենք հասարակական տրանսպորտի երթուղիները՝ ներառելով ծայրամասային «Անի», «Մուշ» «Շերամ» թաղամասերը, որպեսզի ապահովենք քաղաքի բոլոր հատվածների հավասարաչափ հասանելիությունը։
2.3. Փոխարինելու ենք գործող կանգառասրահները՝ դրանք վերազինելով ժամանակակից թվային լուծումներով և ավելի հարմարավետ դարձնելով սպասարկումը։
2.4. Ապահովելու ենք քաղաքային տրանսպորտի հասանելիությունը մինչև կեսգիշեր՝ դարձնելով երթևեկությունը ավելի հարմար և անվտանգ։

2.5. Վերահսկելու ենք վարորդների արտաքին տեսքը, վարքագիծը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների մաքրությունն ու տեխնիկական վիճակը՝ ուղևորներին տրամադրելով լավագույն սպասարկումը։
2.6. Կահավորելու ենք փողոցները ճանապարհային նշաններով, պատշաճ կերպով գծանշելու ենք հետիոտնային անցումները և ավտոկայանատեղիները, իսկ մարդաշատ հատվածներում տեղադրելու ենք «կանչի ռեժիմով» և «խելացի» լուսացույցներ՝ երթևեկության անվտանգությունն ու կառավարումը բարելավելու համար։
2.7. Իրականացնելու ենք հեծանվային և հետիոտնային ուղիների ընդլայնում։

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

3.1. Շարունակաբար բարելավելու ենք աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակը՝ վերազինելով կոմունալ ծառայության մեքենաների պարկը։
3.2. Թափառող շների խնդրի կարգավորման նպատակով կառուցելու ենք ապաստարան և իրականացնելու ենք զանգվածային ստերջացման ծրագիր՝ պահպանելով կենդանիների բարեկեցության կանոնները։
3.3. Շարունակելու ենք լուսավորել երկրորդական փողոցների բակերն ու փողոցները, ինչպես նաև բարելավել լուսավորության ցանցի ժամային գրաֆիկը՝ ապահովելով առավել արդյունավետ աշխատանք։
3.4. Լուծելու ենք «Մուշ» թաղամասի աղբադաշտի խնդիրը։ Տեսակավորման և վերամշակման մեխանիզմներ ենք ներդնելու, ինչը կարևոր քայլ է քաղաքի էկոլոգիական անվտանգության համար։
3.5. Կանոնակարգելու ենք Գյումրի գետակի հունի մաքրումը և սանիտարական վիճակը՝ ապահովելով բնական միջավայրի վերականգնումը։
3.6. Բնապահպանական միջավայրի բարելավմանը զուգընթաց ավելացնելու ենք կանաչապատ տարածքները՝ ստեղծելով ավելի շատ հանրային այգիներ և հանգստի գոտիներ։
3.7. Գյումրու պատմական միջուկի՝ Կումայրի արգելոցի տարածքում սահմանելու ենք ոչ երթևեկելի ժամեր՝ ապահովելով ժառանգության պահպանությունն ու զբոսաշրջային միջավայրի բարելավումը։

3.8. Ապահովելու ենք Գյումրու գետնանցումների հասանելիությունը՝ իրականացնելով մաքրման և լուսավորության աշխատանքներ։
3.9. Ամենափրկիչ եկեղեցու ճեմուղու շատրվանի օրինակով վերանորոգելու ենք այլ պուրակների շատրվաններ, բարեկարգելու ենք շրջակա տարածքը՝ դարձնելով գրավիչ ու բարեկարգ։
3.10. Կանաչ գոտիներում ճանաչելով հանրային գերակա շահը՝ ծառայեցնելու ենք հանուն գյումրեցիների։
3.11 Արդիականացնելու ենք համայնքի կեղտաջրերի հեռացման և մաքրման համակարգը։

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

4.1. Սոցիալական աջակցությունը դարձնելու ենք առավել թիրախային, որպեսզի այն ծառայի առավել կարիքավոր խավերին։
4.2. Խոցելի խմբերի հետ աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ավելացնելու ենք սոցիալական աշխատողների թիվը և ուժեղացնելու ենք համայնքային սոցիալական ծառայությունները։
4.3. Հատուկ ծրագրեր ենք մշակելու միայնակ թոշակառուների, հաշմանդամություն ունեցող անձանց և բազմազավակ ընտանիքների աջակցության համար։
4.4. Կազմակերպելու ենք մասնագիտական վերապատրաստման և զբաղվածության խթանման ծրագրեր՝ նպաստելով անապահով ընտանիքների աշխատաշուկայում ներգրավմանը։

5. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

5.1. Ստեղծելու ենք օդանավակայանից երկաթուղային կայարան տանող տրանսպորտային հանգույց՝ բարելավելով տրանսպորտային հաղորդակցությունը։
5.2. Մշակելու ենք Գյումրին տեխնոքաղաք դարձնելու ռազմավարություն և ճանապարհային քարտեզ։

5.3. Ստեղծելու ենք զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ հանրային զուգարաններ, QR կոդով քարտեզներ, եռալեզու տեղեկատվական վահանակներ։
5.4. Ներդնելու ենք էլեկտրոնային վճարման ճկուն համակարգ, աուդիո և վիդեո գիդ-ծառայություն համայնքապատկան թանգարաններում՝ զբոսաշրջիկների համար ապահովելով ժամանակակից մոտեցումներ։
5.5. Ստեղծելու ենք «Գյումրի 360° վիրտուալ տուր»՝ օգտագործելով VR տեխնոլոգիաներ։
5.6. Զարգացնելու ենք հեծանվային ենթակառուցվածքները՝ ստեղծելով ապահով հեծանվային գոտի։
5.7. Իրականացնելու ենք համայնքի բրենդավորում։

6. ՄՇԱԿՈՒՅԹ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

6.1. Կազմակերպելու ենք մշակութային թիրախային միջոցառումներ և փառատոներ՝ խրախուսելով Գյումրու արվեստի և մշակույթի հանրահռչակումը։
6.2. Մանկապարտեզները դարձնելու ենք ամբողջովին անվճար՝ ապահովելով յուրաքանչյուր երեխայի կրթության և խնամքի հավասար հնարավորություններ։
6.3. Վերանորոգելու և գույքով ենք ապահովելու մարզադպրոցները՝ նպաստելով առողջ ապրելակերպի զարգացմանը։
6.4. Ստեղծելու ենք երիտասարդական ծրագրեր և հարթակներ՝ խթանելով երիտասարդների ներգրավվածությունն ու ակտիվությունը համայնքի կյանքում։ Վերականգնելու ենք համայնքապետին կից երիտասարդական խորհուրդը։
6.5. Երաժշտական և արվեստի դպրոցներում ներդնելու ենք ժամանակակից տեխնոլոգիաներ, թարմացնելու ենք երաժշտական գործիքներն ու գույքը։

7. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

7.1. Ներդնելու ենք համայնքային ենթակայության հաստատությունների աշխատակիցների սոցիալական երաշխիքների ապահովման համակարգ։
7.2. Զարգացնելու ենք համայնքային ծառայողների մասնագիտական կարողությունները՝ վերանայելով աշխատավարձերի համակարգը։
7.3. Ներդնելու ենք թվայնացված ծառայություններ համայնքապետարանում՝ ապահովելով թափանցիկ և մատչելի կառավարման համակարգ։
7.4. Ամրապնդելու ենք համագործակցությունը քույր քաղաքների և միջազգային կառույցների հետ՝ կապերի ընդլայնման նպատակով։
7.5. Ստեղծելու ենք նպաստավոր պայմաններ Գյումրիում ներդրումների ծավալի ավելացման համար:
7.6. Դյուրինացնելու ենք համայնքային բարդ փաստաթղթաշրջանառությունը՝ կրճատելով ժամկետները և պարզեցնելով ընթացակարգերը: